

Հայաստանում կոռուպցիան կառավարելի է

Հեղինակ՝ Լիլիթ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

<http://www.sobesednik.am/index.php/archive-am/2839--142/40387-2010-07-05-07-11-40>



Մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ և օլիգարխներ պետությունը զավթել են

Զրուցում ենք «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի (ՇՊԱԿ) ղեկավար Սոնա ԱՅՎԱԶՅԱՆԻ հետ:

— *Ծառայողական դիրքի չարաշահում, պետական սեփականության յուրացում, պարտականությունների չկատարում... Սրանք բոլորը կոռուպցիայի դրսևորումներ են: Իսկ քաղաքացիներն ի՞նչ գործերով են ձեզ դիմում:*

— Մեր կենտրոնը գործում է 2009-ից: Այս ընթացքում շուրջ 580 դիմում ենք ստացել, միայն 139-ն է կոռուպցիային առնչվել: Հաճախ մարդիկ չեն պատկերացնում, թե ինչ է կոռուպցիան, և քաղաքացիաիրավական տարբեր գործերով են մեզ դիմում: Ինչ վերաբերում է 139 կոռուպցիոն գործերին՝ դրանց մեծ մասը կապված է անշարժ գույքի կորստի հետ: Բոլորս գիտենք, թե կրթական համակարգում, մասնավորապես բուհականում, կոռուպցիան ինչքան մեծ է: Սակայն այս մեկուկես տարում ընդամենը մեկ դեպք է եղել, որ բուհից բողոք ենք ստացել: Ցավալի է, բայց շատ հաճախ մարդիկ նախընտրում են իրենց հարցերը կաշառքով լուծել, քան դիմել մեր աջակցությանը:

— *Ինչո՞ւ:*

— Բուհական համակարգում ուսանողը գիտի, որ ուսումը շարունակելու է: Իսկ փորձը ցույց է տալիս, որ բողոքի դեպքում ոչ ոք չի պատժվում: Այդ պատճառով էլ ուսանողը նախընտրում է կաշառք տալը:

— *Կոռուպցիոն գործն ուսումնասիրելիս կենտրոնն ի՞նչ դժվարությունների է բախվում, դիմադրություն լինո՞ւմ է:*

— Նախ՝ երբ դիմում ենք պետական տարբեր մարմինների՝ շատ քչերն են պատշաճ կարգով մեզ պատասխանում: Փորձելով ըմբռնումով մոտենալ՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված հնգօրյա ժամկետը լրանալուց հետո դատարան չենք դիմում: Բայց երբ պատասխան ընդհանրապես չի տրվում՝ ստիպված դիմում ենք: Դա եղել է Երևանի քաղաքապետի և բնապահպանության նախարարի դեպքում, քանի որ բազմիցս նամակներին չեն պատասխանել: Հաջորդ դժվարությունն ան է, որ շատ հաճախ գործերը չեն բազմում: Դատախազությունը ռոպես կանոն չի

բացատրում, գրությամբ է պատասխանում, որ հանցակազմի բացակայության պատճառով քրեական գործ չեն կարող հարուցել: Բայց ըստ օրենքի՝ դատախազությունը պետք է **երեք տեսակի որոշում ընդունի՝ քրեական գործ հարուցելու մասին, քրեական գործ հարուցելու մերժման մասին** կամ կարող է **տվյալ հաղորդումն ուղարկել այլ մարմնի**: Մենք չենք ստանում այդ որոշումները: Ստանում ենք ընդամենը գրություն, որ առանց հիմնավորումների քրեական գործ չի հարուցվում: Օրինակ՝ դատախազության պաշտոնական կայքում բացահայտել էինք տվյալներ, որ 1995-1996 թթ. սկսած՝ Երևանի քաղաքապետների պաշտոնավարման ընթացքում եղել են տարբեր օրինախախտումներ, չարաշահումներ, ինչի հետևանքով մի շարք պատմամշակութային հուշարձաններ ոչնչացվել են: Այդ կապակցությամբ հարուցվել են քրեական գործեր: Հարցով դիմում ենք դատախազություն՝ արդյոք հարուցվել են քրեական գործեր: Եթե հարուցված լինեին՝ մենք տեղյակ կլինեինք: Ստանում ենք պատասխան՝ հանցակազմի բացակայության պատճառով քրեական գործ չի հարուցվել: Իրենք են հակասում իրենց կայքում տեղադրված որոշումներին: Քանի որ այդ գործերը ենթակա էին ոստիկանության քննությանը՝ դիմեցինք ոստիկանություն՝ խնդրելով որոշում կայացնել: Ոստիկանությունը մեզ չպատասխանեց, փոխարենը կրկին ստացանք դատախազության պատասխանը՝ մենք ձեզ մի անգամ պատասխանել ենք: Փաստորեն ոստիկանությունն անգործություն դրսևորեց: Ստիպված հայց ներկայացրինք ոստիկանության դեմ: Դատարանը որոշեց բավարարել մեր խնդրանքը՝ ոստիկանությունը պարտավորեցնել, որպեսզի որոշում ընդունի: Թե ինչ որոշում կընդունի՝ չգիտենք: Մա քրեական գործ հարուցելու կամքի բացակայության դրսևորում է: Եթե հանցագործությունը կատարվել է, և քրեական գործի հարուցումը մերժվել է կամ կարճվել՝ այն վերականգնելու ցանկություն չկա: Փորձում են կոծկել, գործին չանդրադառնալ: Թե այդ փոքր գործերի հետևում ավելի բարձր շահե՞ր կան՝ դժվարանում ենք ասել:

— *Եթե կենտրոնի աշխատանքում են նման դժվարություններ լինում՝ ի՞նչ ասի շարքային քաղաքացին:*

— Մեղք են այդ քաղաքացիները, քանի որ շատ անօգնական են, չկա պետական անվճար իրավաբանական օգնություն (դա շատ երկրներում գործում է): Միայն հանրային պաշտպանի ինստիտուտ ունենք, որը միայն քրեական գործերով է զբաղվում: Իսկ քաղաքացիական կամ վարչական գործերի առումով աջակցություն չկա: Եթե չլինի միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորումը՝ այդ քաղաքացիները պետական մեքենայի դեմ կմնան բացարձակ անպաշտպան:

— *Ասում են՝ կոռուպցիայի դեմ կարելի է պայքարել աղքատության հաղթահարմամբ:*

— Վստահ չեմ, որ աղքատության հաղթահարումը կօգնի: Այն մարդիկ, ովքեր մեզ չեն դիմում՝ փորձում են իրենց հարցերն այլ կերպ լուծել: Դատավորների աշխատավարձը բարձրացնելը լուծում չէ: Կոռուպցիոն դրսևորումները մարդկանց մտածողության մեջ են ամրապնդված: Հայաստանում մարդկանց ճնշող մեծամասնությունն այս կամ այն կերպ առնչվում է կոռուպցիային, նաև սնում է կոռուպցիան: Սկսած նրանից, որ անօրինական հաշվապահություն են անում, հարկային մարմիններից խուսափում: Հարկեր չվճարելով՝ մենք ներքաշված ենք կոռուպցիայի մեջ:

— *Կաշառակերությունն է ամենավտանգավորը:*

— Հայաստանում այս պահին ավելի վտանգավոր է այն, որ մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ և օլիգարխներ պետությունը զավթել են: Պետության սեփականության ռեսուրսները պետական չինովնիկները շփոթում են սեփականի հետ: Սկսած բնական ռեսուրսներից՝ հանքերից, անտառներից, որոնք հենց կոռուպցիայի պատճառով են վերանում: Այսինքն դա պարզապես օրենքի անկատարություն կամ վերահսկողության թուլություն չէ: Ամբողջական համակարգեր են ստեղծված, որպեսզի գույքի հափշտակումը, ռեսուրսների օգտագործումն անպատիժ տեղի ունենան:

Անօրինականությունը **երկու** պատճառով է տեղի ունենում: Երբ կա **ավելի բարձրաստիճան մեկը, որը կոծկում է, ապահովում անպատժելիությունը**, և եթե **ներքևից տրվում է կաշառքը, որի դիմաց ընդունվում են անօրինական որոշումներ**: Մեզանում երկուսն էլ տեղի են ունենում, ոչ մի բարձրաստիճան պաշտոնյա չի պատժվում: Դատախազության վիճակագրության համաձայն՝ վերջին տարիներին կոռուպցիայի մեջ մեղադրանքով քրեական գործերի թիվը մեծացել է: Բայց գործեր հարուցվում են, եթե նման ցանկություն լինում է: Սակայն այդ ամենի մեջ մենք չենք տեսնում բարձրաստիճան պաշտոնյաների անուններ, մինչդեռ ողջ ժողովուրդը հատակ գիտի դրանք: Ձևավորվել է այնպիսի հանցագործների խումբ, որոնք իրար պաշտպանում են, միմյանց հանցագործությունները կոծկում: Այսինքն նրանք կտրված են ժողովրդից, իրենց փողն են վաստակում, ժողովուրդը տառապում է ու ոչինչ չի կարող անել:

— *Ի՞նչ գործեր կան, որոնք կցանկանայիք առանձնացնել:*

— Մեր ամենահետաքրքիր գործը, որն այս ծրագրի շրջանակներում չի իրականացվել, բայց շատ համահունչ է մեր գործունեությանը, **Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված դատն** է: Թեղուտի հանքավայրի վերաբերյալ որոշման մասին հասարակությունը շատ ուշ է իրազեկվել և փաստորեն որոշումների ընդունման գործընթացին չի մասնակցել: Այդ պատճառով դիմել ենք Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտե: Գործը քննվում է, դեռ արդյունքները չգիտենք: Մեզանում անպատժելիությունը, անօրինականությունն այն աստիճանի են հասել, որ մեր չինովնիկներին հնարավորություն է տրվում նույնիսկ միջազգային կոնվենցիաներ խախտել, և ոչ ոք դրա համար չի պատժվում: Մենք ակնկալում ենք, որ այդ կոնվենցիայի շրջանակներում որոշումն այնպիսին լինի՝ ցույց տա, որ ՀՀ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել: Դա ևս մեկ ազդանշան կլինի մեր իշխանություններին, որպեսզի ուշադրություն դարձնեն իրենց գործելակերպին:

— *Ակնկալիքներ ունե՞ք:*

— Ընդհանրապես մեր իշխանություններից այս պահին դրական ակնկալիքներ չունենք: Փոփոխությունների ոչ մի միտում չենք տեսնում: Հակառակը՝ ամեն օրը բերում է կոռուպցիոն նոր դրսևորումներ: Այժմ Խոսրովի անտառի մասին են խոսում, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի անունն են շոշափում: Օրեցօր նորանոր պատմություններ ենք լսում, պարզապես մեր միջոցները չեն հերիքում

արձագանքելու և քայլեր ձեռնարկելու համար: **Հայաստանում կոռուպցիան կառավարելի է:** Փոխադարձ օգնության համակարգ է գործում: Հենց այդ կառավարելի լինելու պատճառով է, որ չենք կարողանում արդյունքի հասնել: Իրավապահ մարմինները հակված են պաշտպանելու պետական բոլոր կառույցների կատարած գործողությունները: Նույնիսկ այնպիսի տպավորություն է, որ կարևոր չէ, թե դա ինչ գործողությունն է: